

ԿՈՉ

Սիրելի հայրենակիցներ,

Յունուար 12-ին Հայիթին հարուածած երկրաշարժը պատճառ դարձաւ հազարաւոր անձերու մահուան: Անօթեւան մնացին բազմահազար ընտանիքներ: Զանդուեցան եւ հիմնայատակ կործանեցան հիւանդանոցներ, վարժարաններ, գործարաններ եւ բնակելի շէնքեր: Ներկայ դրութեամբ, Հակառակ միջազգային բազմաբնոյթ օգնութեան, Հայիթիի աղէտի, մատնուած բնակչութիւնը յաւելեալ կարիքը ունի տարրական օժանդակութեանց:

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի շրջանը, Հայիթիի դիմագրաւած դժուարութիւններուն հանդէպ անտարբեր չի կրնար մնալ: Երկու տասնամեակ առաջ, Հայաստանի հիւսիսը հարուածած երկրաշարժի օրերուն, ՀՕՄ-ը, աշխարհատարած իր բոլոր մասնաճիւղերով ու կառոյցով, գերմարդկային ճիգերով կարողացաւ ձեռք երկարել բնութեան մեծ աղէտին զոհ դարձած իր ազգակիցներուն: Այդ օրերուն, Հայ օգնութեան միութիւնը զօրաշարժի ենթարկելով իր շարքերը, սատարեց իր հայրենակիցներուն:

Այսօր ի տես Հայիթիի ողբերգական կացութեան, ՀՕՄ-ի Գանատայի շրջանը եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանը, կոչ կ'ուղղեն գանատահայութեան, որպէսզի նիւթական իրենց մասնակցութիւնը բերեն Հայիթիի բնակչութեան օգնութեան աշխատանքներուն: Երկրաշարժի դառնութիւնը ճաշակած հայ ժողովուրդը, անտարբեր չի կրնար մնալ մարդկային նման տառապանքներու դիմաց: Եկէ՛ք, միասնաբար օժանդակենք Հայիթիի օգնութեան կարօտ բնակչութեան:

Ձեր նիւթական օժանդակութիւնը կրնաք դրկել.-

ARS Foundation

3401 Olivar Asselin, Montreal, Quebec H4J 1L5

Note: Haiti Fund

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարան
Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Շրջանային վարչութիւն